«Շտիգեն» ՍՊԸ
Հայաստան, Երևան,
Դ. Անհաղթ 23, 6-րդ տարածք
Հեռ. +374 11 23 00 23
Կայք. www.shtigen.com

Shtigen LLC
23, 6th area D. Anhaght
Yerevan, Armenia
Tel: +374 11 23 00 23
Web: www.shtigen.com

«Շտիգեն» ՍՊԸ պարտատոմսերի սեփականատերերին՝ ՍնԴ/6744/04/26 գործի ընթացքի մասին

Հարգելի՛ պարտատոմսերի սեփականատերեր և գործընկերներ,

«Շտիգեն» ՍՊԸ-ն ամենօրյա հետևում է իր պարտատոմսերի առևտրին Հայաստանի ֆոնդային բորսայում և տեղյակ է, որ ՍնԴ/6744/04/26 գործի մասին տեղեկությունն ազդել է գնանշումների վրա: Ընկերությունը սնանկ չի ճանաչվել, շարունակում է բնականոն գործունեությունը, և պարտատոմսերով վճարումները կատարվում են ժամանակին:

Ընկերությունը գնահատում է գործընթացի ազդեցությունը պարտատոմսերի գնանշումների վրա և իրեն իրավունք է վերապահում օրենքով նախատեսված բոլոր միջոցներով պաշտպանել ընկերության և պարտատոմսերի սեփականատերերի շահերը: Միաժամանակ ընկերությունը բաց է վեճի արտադատական կարգավորման համար:

Պահանջների ընդհանուր գումարը կազմում է մոտ 25,3 մլն ՀՀ դրամ և, անգամ ամբողջությամբ բավարարվելու դեպքում, չի կարող էական ազդեցություն ունենալ ընկերության վճարունակության վրա: Ընկերությունը համարում է պահանջները վիճելի և դատարան է ներկայացնում իր հիմնավորված առարկությունը:

Հարցերի դեպքում՝ +374 11 23 00 23, ceo@shtigen.com:

Հարգանքով՝

Հայկ Շեկյան

«Շտիգեն» ՍՊԸ հիմնադիր տնօրեն

2026-11-18 11:35:18 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

18/11/2026